Երկրորդ ընթերցում

Նախագիծ

Կ-1094-02.06.2025-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Արդարադատության ակադեմիայի մասին» 2013 թվականի մայիսի 2-ի ՀՕ-50-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում «քաղաքացիաիրավական» բառից հետո լրացնել «կամ աշխատանքային» բառերը:

Հոդված 2. Օրենքի 14-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասը ուժը կորցրած ճանաչել.

2) 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«4. Վերապատրաստման վայրից դուրս մշտապես բնակվող սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված ունկնդիրների համար Ակադեմիան, հնարավորության դեպքում, կազմակերպում է նրանց բնակության ապահովումը:»:

Հոդված 3. Օրենքի 16-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասի 2-րդ կետից հանել «, որը զուգորդվում է՝ մինչև 3 ամիս ժամկետով կրթաթոշակի 25 տոկոսից զրկելով» կետադրական նշանը և բառերը.

2) 2-րդ մասի 3-րդ կետից հանել «, որը զուգորդվում է՝ մինչև 6 ամիս ժամկետով կրթաթոշակի 25 տոկոսից զրկելով» կետադրական նշանը և բառերը.

3) 13-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: